

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL  
OF  
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության  
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of  
the Oriental Studies Department, Yerevan State University*

## **Խմբագրական խորհուրդ**

## **Editorial Board**

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,  
պրոֆեսոր (նախագահ)  
Մարգարիտա Խաչիկյան  
բ.գ.դ., պրոֆեսոր  
Ռուբեն Կարապետյան  
պ.գ.դ., պրոֆեսոր  
Արշակ Փոլադյան  
պ.գ.դ., պրոֆեսոր  
Գուրամ Չիկովանի  
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)  
Սամվել Կարաբեկյան  
բ.գ.թ., դոցենտ  
Մուշեղ Ասատրյան  
PhD (Կանադա)  
Սոնա Տոնիկյան  
բ.գ.թ., դոցենտ  
Մարատ Յավրումյան  
բ.գ.թ., դոցենտ  
Հայկ Քոչարյան  
պ.գ.թ., դոցենտ  
Արայիկ Հարությունյան  
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyán  
(editor in chief)  
Prof. Margarita Khachkyán  
Prof. Ruben Karapetyán  
Prof. Arshak Poladyán  
Prof. Guram Chikovani  
(Georgia)  
Dr. Samvel Karabekyan  
Mushegh Asatryan, PhD  
(Canada)  
Dr. Sona Tonikyan  
Dr. Marat Yavrumyan  
Dr. Hayk Kocharyán  
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### *Վարդան Ղափլանյան*

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992  
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

#### *Գայանե Մկրտումյան*

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄՍԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)  
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

#### *Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան*

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈԿՏՐԻՆԻ  
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ  
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

#### *Արշակ Գևորգյան*

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ  
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

#### *Աբու Ջաիդ Ալի Մուսա*

«ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»  
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....61-75

#### *Լուսինե Մկրտչյան*

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

*Գազիկ Համբարյան*

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

*Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա*

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴԻՄ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

*Վահե Աղասարյան*

ԹՈՒՐԲԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

**ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Աննա Գևորգյան*

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՄԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

*Շուշան Կյուրեղյան*

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻԲՆ ԱԼ-ՋԱՌԻԶԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

*Տաթևիկ Մկրտչյան*

ՆԱԿՑ ԱԼ-ԲԱԼՁԳԱ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Դավիթ Հովհաննիսյան*

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

*Լուսինե Տեր-Հովհաննիսյան*

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱՐՄԻԵ».....214-222

*Ամայյա Գրիգորյան*

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Հասմիկ Երիցյան*

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

*Զարուհի Խաչատրյան*

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

*Մերվաթ Գոմասա Աբդուլլահ Օսման*

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

# CONTENT

## HISTORY

*Vardan Ghaplanyan*

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN  
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-  
ABKHAZIAN WAR.....9-22

*G.ayane Mkrtumyan*

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA  
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM  
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

*Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan*

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"  
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION  
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

*Arshak Gevorgyan*

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN  
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY  
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

*Abu Zayd Ali Musa*

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN  
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

*Lusine Mkrtchyan*

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

*Gagik Hambaryan*

QATAR CRISIS AND MIDDLE EAST  
INTERESTS OF THE USA.....86-95

*Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa*

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'  
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

*Vahe Aghasaryan*

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND  
THE KURDISH FACTOR.....114-120

### **ISLAMIC STUDIES**

*Anna Gevorgyan*

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME  
TENSIONS BETWEEN THE PRESIDENT  
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

*Shoushan Kyureghyan*

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING  
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

*Tatevik Mkrtchyan*

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL  
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS  
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

*Levon Petrosyan*

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

### **LITIRATURE**

*Davit Hovhannisyan*

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR  
THE INFORMATION FLOW.....201-213

*Lusine Ter-Hovhannisyan*

THE "HABSIYAT" GENRE IN  
PERSIAN LITERATURE.....214-222

*Amalya Grigoryan*

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS .....223-234

### LINGUISTICS

*Hasmik Yeritsyan*

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES .....235-255

*Zaruhi Khachatryan*

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM» .....256-270

*Mervat Gomaa Abdullah Osman*

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN .....271-283



ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամալյա Գրիգորյան,  
amalya.grigoryan@ysu.am

*Բանալի բառեր՝ Հին կտակարան, Երգ երգոց, Սողոմոն թագավոր,  
եբրայական կանոն, կանոնական գրքեր, երկրորդականոն գրքեր:*

Հին Կտակարանի՝ մեկ ամբողջականություն կազմող գրքերը դարերի ընթացքում ենթարկվել են տարբեր բաժանումների: Թեև այդ գրքերը տարբեր են ներքին բովանդակությամբ, սակայն անբաժանելի են և միասնական: Գրություններ (כְּתוּבִים, Ktuvym) բաժանման մեջ առանձնանում է մի գիրք, որը դարեր շարունակ բազմաթիվ մեկնությունների նյութ է դարձել: Հայերեն թարգմանությունների մեջ այն հայտնի է *Երգ երգոց* (שֵׁשׁ וָשֵׁשׁ, Šyr HaŠyrym) կամ *Օրհնություն օրհնութեանց* (Օրհնությունների օրհնություն) վերնագրերով: Հին Կտակարանի բնագրերում և ինչպես նաև թարգմանություններում հանդես է գալիս տարբեր անվանումներով:

Եբրայական կանոնում<sup>1</sup> Երգ երգոցը հաջորդում է Հոբի և նախորդում է Հռութի գրքերին<sup>2</sup>: Իր այս տեղը զբաղեցնում է մ.թ. 90թ. Յամնիայի ժողովի ժամանակ ընդունված որոշման համաձայն:

<sup>1</sup> Հրեական կանոնը բաղկացած է 22 գրքերից խորհրդանշելով եբրայերենի այբուբենը: - Դարբինյան Գ, *Ներածություն Հին Կտակարանի*, Էջմիածին, 2000, էջ 14:

<sup>2</sup> Յոթանասնիցի հունական տարբերակում Երգ երգոցը հաջորդում է Ժողովող գրքին: - Harrison R. K., *Introduction to the Old Testament*, The Tyndale Press, London, 1970, p. 1049.

Երգ երգոց գիրքը երբայերեն տարբերակում հանդես է գալիս **סירי ה שיר** (*Syr HaSyrım*) անունով ինչն էլ թարգմանաբար նշանակում է *երգերից լավագույն*: Դարեր շարունակ տարածված է այն կարծիքը, թե Երգ երգոցը գրվել է Սողոմոն թագավորի կողմից: Այն թվագրվում է մ.թ.ա. III դ.<sup>3</sup>:

Հեղինակի և գրի առման վերաբերյալ վարկածները կարելի է դիտարկել նաև լեզվաբանական տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ Երգ երգոցի բնագիրը համարվում է երբայերենը, այնուամենայնիվ, գրքում հանդիպում են արամերեն, հունարեն փոխառություններ ևս: Օրինակ, արամերեն ձևերից առանձնանում է *ש* (*še*) հարաբերական դերանվան կիրառումը աստվածաշնչյան երբայերենին հատուկ *רשח-ה* (*ašer*) փոխարեն: Երգ երգոցի տեքստում հանդիպում են նաև արամերեն բառեր երբայերենի փոխարեն<sup>4</sup>: Արամեական ձևերի առկայությունը չի կարող բացատրել հեղինակի ով լինելու փաստը, քանի որ այդպիսի տարբերակներ կարող են հանդիպել Հին Կտակարանի՝ տարբեր ծագում և ժամանակաշրջանին պատկանող գրքերում: Արամերեն փոխառությունների առկայությունը կարելի է բացատրել նաև որպես տեղական բարբառի արդյունք<sup>5</sup>:

Աշխարհագրական տվյալները գրքի գրառման տարեթիվը հասցնում են Իսրայելի հյուսիսային թագավորություն, մինչ դրա

<sup>3</sup> Davidson J., *Song of Songs. The Soul and the Divine Beloved*, Clear Press, Great Britain, 2004, p. 11.

<sup>4</sup> Օրինակ, *סירי ה שיר* (*berotym*) *סירי ה שיר*-ի (*berošym*) փոխարեն, որը նշանակում է *զերան* (U 17), *שט* (*setav*) կիրառումը *אלה* իմաստով, որը երբայերեն նշանակում է *աշուն*: Կամ էլ հունարեն *אפירոն* (*appiryōn*) բառը *קשה* կորակ իմաստով, որն էլ հավանաբար ծագում է Հնդկաստանից և ոչ Հունաստանից: - Longman T., *Song of Songs*, Wm. B. Eerdmans Publishing Co, 2001, p. 19.

<sup>5</sup> Հավանաբար Երգ երգոցի որոշ հատվածներ գրվել են Իսրայելի հյուսիսային հատվածում, որտեղ արամերենի լեզվական դերը կարևոր է եղել: - Vriezen Th. Ch., Van Der Woude A.S., *Ancient Israelite and Early Jewish Literature*, Koninklijke Brill NV, The Netherlands, Leiden, 2005, p. 453-455.

ավերումը ասորեստանցիների կողմից մ.թ.ա. 721թ.: Հուդայի հարավային թագավորությունը հիշատակվում է միայն *Միոնի դուստրեր* և *Երուսաղեմի դուստրեր* արտահայտությունների մեջ և Ենգադիի մասին հիշատակելիս, որն ընկած է Մեռյալ ծովի ափին: Երգ երգոցում կիրառվում են Շարոն և Սիոն<sup>6</sup> տեղանունները նույնպես: Հավանաբար, այս տեղանունների կիրառումը ավելի շատ գրական և դարձվածային կիրառում է, քան հենց աշխարհագրական<sup>7</sup>:

Այսպիսով, եթե Երգ երգոցը չի պատկանում մեկ՝ սողոմոնյան ժամանակաշրջանին, հետևաբար գրքի գրառումը կարելի է թվագրել նախագերության շրջանին նույնպես: Գիրքը թվագրելու փաստերը շատ են և իրարամերժ: Ինչպես, օրինակ, հրեական ավանդույթը աստվածաշնչյան երեք գրքերի հեղինակ է համարում Սողոմոնին. Երգ երգոցը գրել է երիտասարդ տարիներին, Առակաց գիրքը՝ հասուն տարիքում, իսկ Ժողովողը՝ ծեր հասակում<sup>8</sup>:

Երգ երգոցի գրի առման ժամանակաշրջանից բացի հարցեր են ծագում հեղինակի շուրջ ևս: Չնայած վերը նշված մի շարք

---

<sup>6</sup> Երգ երգոց, Բ 1,7; Գ 5,10; Ե 8, 16: - *Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց*, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, Երևան, 1997:

<sup>7</sup> Ինչպես, օրինակ, Թերսա մայրաքաղաքի հիշատակումը Երուսաղեմին գուցահեռ. «Գեղեցիկ ես դու, ով ընկերուհիս, Թերսայի պես, հաճելի ես Երուսաղեմի պես. երկիւղալի՝ դրօշակիր զօրքերի պես»: - *տե՛ս, նույն տեղում*: Երգ երգոց, Զ 4: 1 : וְיִרְשֵׁי אֶרֶץ : אֵימֹתַי כִּי יִשְׂרָאֵל : אֵימֹתַי כִּי יִשְׂרָאֵל : אֵימֹתַי כִּי יִשְׂרָאֵל . Օմրի թագավորը (մ.թ.ա. 885-873թթ.) Թերսան փոխարինեց Սամարիա մայրաքաղաքով: Թերսան հյուսիսային թագավորության գլխավոր քաղաքներից էր մ.թ.ա. IXդ.: Այս հիշատակումը վկայում է Թերսայի փառքի մասին կամ էլ որպես վաղ ժամանակների հյուսիսային մայրաքաղաքի կարգավիճակն է վերականգնում՝ կանխելով հրեաների կողմից Սամարիա անվան կիրառումը: Այսպիսով, համեմատության մեջ է դնում հյուսիսի և հարավի մայրաքաղաքները՝ Թերսան և Երուսաղեմը: - Young E.J., *An Introduction to the Old Testament*, USA, Michigan, 1989, p. 332-334.

<sup>8</sup> Mangano M., *Introduction to the Old Testament*, College Press, 1958, p. 320-322.

փաստերի, որոնք վավերականացնում են Սողոմոնի՝ հեղինակ լինելու փաստը, այնուամենայնիվ, դժվար է հասկանալ, թե այն իրականում պատկանում է Սողոմոնի գրչին, թե՞ տարբեր ժամանակահատվածներում և տարբեր հեղինակների կողմից գրի առնված սիրային բնույթի բանաստեղծությունների ժողովածու է: Սակայն գրքում միասնական ոճի և լեզվի, թեմատիկ հետևողականության առկայությունն էլ մատնանշում է մեկ հեղինակի գոյության փաստը:

Ուսումնասիրելով Հին Կտակարանի հայերեն թարգմանությունները՝ հնարավոր է պատկերացում կազմել Երգ երգոցի թարգմանությունների մասին ևս, քանի որ այն այդ գրքի անբաժանելի մասն է կազմում: Սակայն այստեղ ևս ծագում են բազմաթիվ հարցեր՝ կապված թե՛ բնագիր տեքստի, թե՛ հայերեն տարբեր թարգմանություններում նրա զբաղեցրած տեղի վերաբերյալ: Երգ երգոցի հայերեն մի շարք հրատարակություններում նկատելի են լեզվական և բնագրային տարբերություններ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, դեռ հստակ չէ Հին Կտակարանի հայերեն առաջին թարգմանության բնագրի լեզուն: Եթե ընդունենք այն տեսակետը, թե առաջին նախնական թարգմանությունը կատարվել է ասորերենից, այնուհետև՝ հունարենից, ապա հասկանալի է դառնում Երգ երգոցում հանդիպող լեզվական բազմազանությունը<sup>9</sup>:

Թարգմանության առաջին շրջանին կամ, այսպես կոչված, *փոթանակի* թարգմանությանն է պատկանում նաև Երգ երգոցը<sup>10</sup>:

<sup>9</sup> Մելքոնյան Հ., «Աստվածաշնչի ասորերեն և հայերեն թարգմանությունների պատմությունից», *Էջմիածին*, N 11-12, 40-50, 1966, էջ 42-44:

<sup>10</sup> Թարգմանության առաջին շրջանին են դասում նաև Մնացորդաց գրքերը: - Օովական Ն. վրդ., «Աստվածաշնչի հայերեն հին թարգմանությունները», *Միտն*, N 3-4, 47-50, 107-112, 145-148, 1945, էջ 111:

Այս գրքի բնագրային լեզուն բայց զուրկ է դասական հայերենին հատուկ բարձրությունից և կանոնավորությունից<sup>11</sup>:

Սուրբ գրքի՝ առաջին փուլի թարգմանության ժամանակ թարգմանվում է Երգ երգոցը, իսկ արդեն Եփեսոսի ժողովից հետո (431թ.) կատարվում է այդ գրքի սրբագրությունը: Երգ երգոցի նախնական թարգմանությունը հասնում է մինչև մեր օրերը այդ գրքի շուրջ կատարված մեկնությունների միջոցով ևս <sup>12</sup>: Երգ երգոցի՝ հունարենի հիման վրա սրբագրության միջոցով էլ աստվածաշնչյան տեքստի մեջ հայտնվում են այնպիսի սխալներ կամ անճշտություններ, որոնք առկա են եբրայերեն բնօրինակից հունարեն թարգմանության ժամանակ: Օրինակ, կան բառացի թարգմանված կամ այսպես կոչված *ստրկական թարգմանություններ*, տարբեր հատվածների թարգմանություններ<sup>13</sup>, որոնք կամ բացակայում են Փեշիտայում, կամ հանդես են գալիս տարբեր ձևերով: Այս դեպքում հայերեն թարգմանությունը հետևում է հունարենին, բայց ոչ ասորերենին կամ եբրայերենին:

Երգ երգոցում կան մի շարք *կերպարներ*՝ հարսը, փեսան, եղբայրները, Երուսաղեմի դուստրերը և մի օտարական: Եվ դերերը չխառնելու նպատակով հայերեն թարգմանության մեջ ներմուծվել են, այսպես կոչված, կարմրագրերը<sup>14</sup>, որոնցով նշանակված են դերերը: Եբրայերեն և հունարեն տարբերակներում բացակայում են

---

<sup>11</sup> Ոսկեան Հ., *Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1924, էջ 12:

<sup>12</sup> Երգ երգոցի առաջին փութանակի թարգմանությունը սովորաբար թվագրում են 403-406 կամ 407-410թթ.: - տե՛ս, նույն աշխ. , էջ 15:

<sup>13</sup> Երգ երգոց, Ա 6, 10, Բ 13, Գ 1, Դ 3, 10, Ե 12, 16, Ջ 2, 6, Է 1: - *Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց*, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, Երևան, 1997:

<sup>14</sup> Օրինակ, Հարսն ասէ (Ա 1), Փեսայն ցիր անձն ևս ցհարսն ասէ (Բ 1) և այլն: - *Զոհրապյան Հ. , Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց*, հ. 1-4, Վենետիկ, 1805:

այդպիսի նշումները: Դրանց գլխավոր նպատակը տեքստն ընթերցողին հասկանալի և հասանելի դարձնելն է: Կարմրագրերի ներմուծումը Երգ երգոցի հայերեն թարգմանության մեջ կարելի է համարել հայ թարգմանչի կողմից կատարված կարևոր մի նորամուծություն:

Հին Կտակարանի հայերեն տարբեր հրատարակություններում կարևորվում է նաև այն հարցը՝ դասվում է արդյոք Երգ երգոցը երկրորդականոն գրքերի շարքին, թե ոչ: Եվ վերջինիս պատասխանելու համար հարկ է դիտարկել և քննել Հին Կտակարանի հայերեն առանցքային հրատարակությունները:

Ինչպես արդեն նշվել է, Երգ երգոցը ընդգրկված է երբայական կանոնի մեջ, հետևաբար ասորական և հունական թարգմանությունների մեջ այն ևս զբաղեցնում է իր տեղը: Երբայական, հունական կամ ասորական կանոններից բացի Հին Կտակարանի մաս կազմող գրքերը հայերեն թարգմանության մեջ նույնպես բաժանվում են կանոնական և երկրորդականոն գրքերի, որոնց ցանկը հաստատվել է եկեղեցական ժողովների ժամանակ ընդունված որոշումների համաձայն: Առաջինը հայտնի է 435 եպիսկոպոսների<sup>15</sup> ընդունած կանոնը, որի համաձայն Երգ երգոցը դասվում է կանոնական գրքերի շարքին<sup>16</sup>: Հաջորդը Անտոքի ժողովների ժամանակ (264-269թթ.) է հաստատվում Հին

<sup>15</sup> Հայտնի է նաև *Լալոդիկի ժողով* անվամբ: - Тер-Мовсесян М., *История перевода Библии на армянский язык*, СПб, 1902, стр 253., Աձեւյան Շ. եպս, «Ոսկանեան Սստուածաշունչի կանոնը», *Միռն*, N 4, 205-206, 1966 , էջ 206:

<sup>16</sup> «Եւ գոր ինչ արժան է կարդալ, են այսոքիկ. զարարածս, զելս, զղևտացիս, զթիւս, զերկրորդ օրէնս, զՅէսու, զդատաւորսն, զՀռութ, զթագաւորութիւնս Դ, զմնացորդս Բ, զԵզր Բ, զաղմոսն Դաւթի ՃԾ, զՍողոմոնի Գ, զառակս, զեկլէստիաստէսն, զերգ երգոցն, զՅոբ, զերկոտասան մարգարէսն, զՈվսէ, զԱմովս, զՄիքիա, զՅովել, զԱբդիու, զՅովնան, զՆաուում, զԱմբակում, զՍոփոնիա, զԶաքարիա, զՄիքիա, զՇասայի, զԵրեմիա, զԵզեկիել, զԴանիել, զմակարայեցիս»: -տե ս, նույն աշխ, Երգ. 253-254.

Կտակարանի գրքերի ցանկը, որտեղ Երգ երգոցը դասվում է կանոնական գրքերի շարքին և հանդես է գալիս *գորհնություն գորհնություն* անունով<sup>17</sup> : Մյուսը հայտնի է *Մրբոց հարցն հետևողաց* անվամբ, որտեղ Երգ երգոցը հանդես է գալիս *Սողոմոնի Գ* շարքում, որի մեջ դասվում են Առակաց, Ժողովող և Երգ երգոց գրքերը<sup>18</sup> : Կարևոր է նաև *Պարտավի* ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ հաստատված կանոնական և երկրորդականոն գրքերի ցանկը<sup>19</sup>, որը գումարվեց 768 թ. Մին Ա Բավոնեցի կաթողիկոսի կողմից (767-775թթ.): Ժողովի ժամանակ ընդունված վերջին քսանչորսերորդ կանոնում խոսվում է նաև Հին և Նոր Կտակարանների գրքերի ցանկի մասին<sup>20</sup> : Այս ժողովի ընդունած կանոնի համաձայն Երգ երգոցը կրկին ներառվում Հին Կտակարանի կանոնական գրքերի ցանկում *Սողոմոնի Գ*<sup>21</sup> անվան ներքո: Պարտավի ժողովում հաստատված գրքերի ցանկը համապատասխանում է եբրայական կանոնի քսաներկու

<sup>17</sup>Տե՛ս, նույն աշխ, էջ 255:

<sup>18</sup>Օովական Ն. վրդ., «Պարտավի ժողովին կանոններուն վերջին յօդուածը», *Միոն*, N 1-3, 26-27, 1944, էջ 27:

<sup>19</sup> Պարտավի ժողովի որոշումը հետևում է եբրայական կանոնական գրքերին, սակայն պահում Յոթանասնիցի հունական կանոնի շարքը: - Աճեմյան Շ. եպս., «Ոսկանեան Աստուածաշունչի կանոնը», *Միոն*, N 4, 205-206, 1966, էջ 413:

<sup>20</sup>«Եւ եղիցի ամենեցուն ձեզ՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց պաշտելի զիրք սուրբք ի հին եւ Նոր Կտակարանացն»: - Մելիք-Թանգեան Ն., *Հայոց եկեղեցական իրավունքը: Ներածություն և աղբիւրներ*, Ա զիրք, Եղիաբեթ Մ. Մահտեսի-Յակոբեանցի տպ., Շուշի, 1903, էջ 436:

<sup>21</sup> Մինչ 1180թ. Աստվածաշնչի մասերը մեկ հատորի մեջ հավաքված չէին: Դրանք առանձին խմբավորումներով առանձին հատորներ էին կազմում, օրինակ՝ Առակաց, Ժողովողի, Երգ երգոց և երբեմն էլ Սողոմոնի իմաստության գրքերը միասին ընդգրկվում էին մեկ հատորում: Բոլոր գրքերը մեկ հատորի մեջ ամփոփելու գործը ձեռնարկեց Ներսես Լամբրոնացին (1153-1198): - Ակինեան Ն., «Սուրբ գրքի հայերեն թարգմանությունը», *Հանդես ամսօրյա*, N 10-12, 550-563, 1935, էջ 560:

գրքերին՝ չնայած թվարկման և դասավորության որոշակի տարբերությանը<sup>22</sup>:

Հաստատված այս կարգերից բացի գոյություն ունեն Հին Կտակարանի գրքերի դասավորության այլ շարքեր ևս, որոնց մեջ Երգ երգոցը ներառվում է: Օրինակ, Կյուրեղ Երուսաղեմցի հայրապետի (IVդ.) հորինած ցանկը, ով, սակայն, տարբերություն չի դրել կանոնական կամ երկրորդականոն գրքերի միջև, այլ ուղղակի թվում է դրանք, որոնց մեջ հանդիպում է նաև Երգ երգոցը: Հայտնի է Անանիա Շիրակացու ցանկը (VIIդ.), որում Երգ երգոցը նույնպես առկա է *Օրհնություն օրհնութեանց* անվամբ: Ապա Հովհաննես Իմաստասեր Սարկավագ Վարդապետի ցանկը (XII – XIIIդդ.), որտեղ բացակայում է Երգ երգոցը: Հայտնի է նաև Գրիգոր Տաթևացու (XIIդ.) հաստատած ցանկը, որտեղ այն ներկայացվում է *Երգ երգոց Սողոմոնի* տեսքով<sup>23</sup>:

Պարզաբանելով այն հարցը, թե ինչ տեղ է զբաղեցրել Երգ երգոցը տարբեր ցանկերում կամ կանոններում, կարելի է եզրակացնել, որ այն իր տեղն է զբաղեցնում Հին Կտակարանի հայերեն թարգմանություններում՝ սկսած 1666թ. Ոսկան Վարդապետի կողմից հրատարակված հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչից: Ոսկանյան Աստվածաշունչը որդեգրել է հին եկեղեցիների կողմից ընդունված Յոթանասնիցի հունական կանոնը, սակայն այստեղ նկատելի է լատիներեն Վուլգատայի ազդեցությունը ևս<sup>24</sup>: Քանի որ Ոսկան Վարդապետը համեմատել է լատիներեն

<sup>22</sup> Ներսեսյան Ն. ավգ. քին., *Աստվածաշունչը և հայ մշակույթը*, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2001, էջ 24:

<sup>23</sup> Շամլեան Դ. վրդ., «Սուրբ գրոց կանոնական և երկրորդականոն գրքերը», *Միտն*, N 2-3, 83-87, 1966, էջ 84-86:

<sup>24</sup> Վուլգատայի ազդեցության առաջին նշանները Կիլիկյան Հայաստանում են երևան եկել XIIIդ. ընդօրինակված Աստվածաշնչի լատինական գլխաբաժանումների ներմուծմամբ, որոնք համատեղվում էին հայկական բնագրի հետ: Այն հանդես է գալիս 1295թ. Հեթում Բ թագավորի համար գրված



Վուլգատայի և Յոթանասնիցի հունարեն տարբերակի հիման վրա կատարված թարգմանության հետ, և այնտեղ, իր կարծիքով, առավելություններ և երբեմն էլ թերություններ է գտել հայերենի հետ համեմատած<sup>25</sup>: Երգ երգոցը Ոսկանյան Աստվածաշնչում ընդգրկվում է կանոնական գրքերի ցանկում<sup>26</sup>:

1666թ. հետո, ինչպես արդեն նշվել է Հին Կտակարանի հայերեն թարգմանությունները հատվածում, բազմիցս հրատարակվել են Աստվածաշնչի տարբերակները, որոնք հիմնականում հետևում էին Ոսկանյան Աստվածաշնչին: Այդ հրատարակությունների մեջ ուշագրավ է հատկապես 1805թ. Վենետիկում Հովհաննես վարդապետ Զոհրապյանի կողմից հրատարակված Աստվածաշունչը, որում իր լեզվական և բնագրային առանձնահատկություններով հանդես է գալիս Երգ երգոցը: Զոհրապյանը իր հրատարակության ներածական հատվածում պատմում է, որ իր թարգմանությունը համեմատել է ութ այլ ձեռագրերի և Ոսկան Վարդապետի Աստվածաշնչի հետ<sup>27</sup>: Զոհրապյանի Աստվածաշունչը հայկական դասական բնագրի առաջին քննական հրատարակությունն է: Զոհրապյանի հրատարակության մեջ հանդես եկող Երգ երգոցը այլ հրատարակությունների հետ համեմատ լեզվական և բնագրային տարբերություններ ունի: Երգ երգոցի թարգմանության մասին

---

Աստվածաշնչում: - Քոլանջյան Ս, «Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը», *Էջմիածին*, N 11-12, 82-97, 1966, էջ 82-85:

<sup>25</sup> Գալեմբեարեան Հ., «Հայ Աստուածաշունչի տպագրության ջանքեր Ոսկանեն յառաջ», *Հանդես ամսօրյա*, N 1, 8-18, 1914, էջ 10-15:

<sup>26</sup> Գրքերի մի մասը հետևում է եբրայական կանոնին և համարվում է կանոնական կամ նախականոն, իսկ մյուս մասը կազմում է Յոթանասնիցի հունական կանոնը և համարվում է երկրորդականոն: - Շովական Ն. վրդ., «Պարտալի ժողովին կանոններուն վերջին յօդուածը», *Միոն*, N 1-3, 26-27, 1944, էջ 70:

<sup>27</sup> Ոսկան Վարդապետի մեծ գործը գնահատելով հանդերձ՝ Զոհրապյանը քննադատում է վերջինիս կատարած կամայական փոփոխությունները: - Զոհրապյան Հ., *Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց*, հ. 1-4, Վենետիկ, 1805, էջ 13:

տեղեկություններ Ձոհրապայանը ներկայացնում է իր նախաբանում. «Այս մատեան եւեթ յամենայն գրչագիրս մեր առաւելապէս համաձայնէր ընդ գաղափարին ոսկանայ, մանաւանդ յերիս գիրսն սողոմոնի՝ յառական, ի ժողովողն, և յերգան, որպէսզի ի սոսա բաղդատեալ ընդ այլոց՝ թուին իմն այլ և այլ թարգմանութիւնք»<sup>28</sup>:

Երգ երգոցի մեկ այլ հիանալի թարգմանության օրինակ է հանդիսանում Վիեննայում 1924թ. Համագասպ Ոսկեանի հրատարակությունը և այդ գրքի շուրջ արված ուսումնասիրությունը: Համեմատելով Ոսկեանի և Ձոհրապայանի հրատարակությունները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ դրանք տարբեր թարգմանություններ են <sup>29</sup>: Հ. Ոսկեանը Երգ երգոցի սովորական բնագրի հետ միասին լույս է ընծայում նաև մեկ այլ օրինակ, որը համարվում է առաջին շրջանի թարգմանություններից և ցույց է տալիս հունարեն սկզբնագիրը<sup>30</sup>: Հայերեն բնագրի հետ կապված Ոսկեանը գրում է. «Երգ երգոցն Աղեքսանդրեան սկզբնագիր մը կը մատնանշէ ցուցանելով նմանութիւններ թիւ 106 հունարեն ձեռագրին եւ անոր հետևորդներուն հետ, որոնց ամէնուն Աղեքսանդրեանի ներկայացուցչութիւնը կը մնայ դեռ խնդրոյ նիւթ»<sup>31</sup>: Հ. Ոսկեանը պնդում է, թե Երգ երգոցի նախնական և սրբագրված թարգմանությունների իսկական արժեքը հասկանալու համար անհրաժեշտ է փորձել հունարենի հետ մանրակրկիտ համեմատություններ անել:

Երգ երգոցը, ընդգրկվելով Աստվածաշնչի բոլոր հրատարակություններում, լեզվաբանական տեսանկյունից կարող է

<sup>28</sup>Տե՛ս, նույն աշխ. , էջ 15:

<sup>29</sup>Օովակյան Ն. վրդ., «Աստվածաշնչի հայերեն հին թարգմանությունները», *Միտն*, N 3-4, 47-50, 107-112, 145-148, 1945, էջ 111:

<sup>30</sup> Անասյան Հ., *Աստուածաշունչ մատեանի հայկական բնագիրը (մատենագիտութիւն)*, Հայկական ՄՄՀ գիտ. ակադ. հրատ., Երևան, 1976, էջ 319:

<sup>31</sup> Ոսկեան Հ., *Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1924, էջ 35:

արժանանալ տարբեր գնահատականների, որից առավել արժեքավոր են համարվում Հ. Զոհրապյանի և Հ. Ոսկեանի հրատարակությունները:

Բացի վերը նշված հրատարակություններից և թարգմանություններից գոյություն ունեն աշխարհաբար թարգմանություններ ևս, որոնցից առավել հայտնի է 1853թ. Զմյուռնիայում հրատարակված աշխարհաբար Աստվածաշունչը<sup>32</sup>: Այս հրատարակության մեջ Երզ երգոցի արևմտյան աշխարհաբարով թարգմանությունը սովորաբար թվագրվում է 1849թ.<sup>33</sup>:

Երզ երգոցը հանդես է գալիս աշխարհաբար նոր թարգմանություններում ևս, որի զբաղեցրած տեղը Հին Կտակարանի գրքերի շարքում և լեզվական առանձնահատկությունները հիմնված են նախկին հրատարակությունների և ընդունված համապատասխան կանոնների վրա:

## THE HEBREW TEXT AND THE ARMENIAN TRANSLATIONS OF THE SONG OF SONGS

### Summary

Amalya Grigoryan  
amalya.grigoryan@ysu.am

**Keywords:** *Old Testament, Song of Songs, King Solomon, Hebrew canon, canonical books, deuterocanonical books.*

The article presents the history of the Hebrew text and the Armenian translation of the book “Song of Songs”. After the proclamation of Christianity as the state religion of Armenia (301 AD) the translation of the Bible into Armenian language was a great challenge which was solved at the beginning of the 5th century right after St. Mesrop Mashtots' invention of the Armenian alphabet (405 AD).

<sup>32</sup> Մանուկեան Ա. արքպս., *Աստուածաշունչ մատենաը*, Թեհրան, 1995, էջ 175:

<sup>33</sup> Տերյան Վ. եպս., «Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության և հրատարակության պատմությունից», *Էջմիածին*, N 11-12, 176-189, 1966, էջ 180:

Since the Bible was translated into Armenian from Syriac and Greek only, there is no Armenian translation made directly from the Hebrew text.

The article examines any possible links between the Armenian and Hebrew text of the book “Song of songs”.

## **ЕВРЕЙСКИЙ ТЕКСТ И АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ КНИГИ “ПЕСНЬ ПЕСНЕЙ”**

### **Резюме**

*Амалия Григорян  
atalya.grigoryan@ysu.am*

*Ключевые слова: Ветхий Завет, Песнь Песней, Царь Соломон, еврейский канон, канонические книги, деитероканонические книги.*

Эта статья описывает историю еврейского текста и армянский перевод книги “Песнь Песней”.

После провозглашения христианства как государственной религии Армении (301г. н.э), перевод Библии на армянский язык был большим вызовом, который разрешился в начале V века, сразу же после создания армянского алфавита Св. Месропом Маштоцем (405г. н.э.).

Несмотря на то, что Библия была переведена на армянский язык с сирийского и греческого языков, нет никакого перевода на армянский язык, сделанного непосредственно с еврейского текста.

Статья рассматривает всякие возможные связи между еврейским и армянским текстами книги “Песнь Песней”.